Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն Ջ.Ստեփանյան

# Թեմատիկ պլանավորում

## 2023-2024 ուստարի

## Տարեկան

***Առարկան*** Հայոց եկեղեցու պատմություն

***Դասարան*** X

***Ժամաքանակ*** 34 ժամ

***Ուսուցիչ*** [illegible] Հարությունյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Հայոց եկեղեցու պատմություն

X դասարան ( 34 ժամ )

| Դասի N /ժամ | Դասի բաժինը, թեման, նյութը | Սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջները ըստ Ա, Բ, Գ մակարդակների | Տնային կամ ինքնուրույն աշխատանք |
|---|---|---|---|
| 1 /1/ | Ներածություն: | | էջ 3-4 |
| | ԹԵՄԱ I. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | | |
| 2 /1/ | Բարոյականության վերաբերյալ պատկերացումները մինչքրիստոնեական աշխարհում: | Ա մակարդակ<br>Իմանա՝ ինչ են իրենցից ներկայացնում բարոյականությունն ու բարոյագիտությունը<br>Կարողանա՝ տալ պատկերացում բարոյական հատկանիշների և բարոյագիտության վերաբերյալ<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ բարոյականություն, բարոյագիտություն եզրերը<br>Կարողանա՝ ծանոթացնել 10 պատվիրաններին, հին աշխարհի փիլիսոփաների առաջին տեսություններին<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ կապը մինչքրիստոնեական և քրիստոնեական բարոյագիտությունների միջև<br>Կարողանա՝ ցույց տալ բարոյական հատկանիշների կայունությունն ու տարբեր հասարակություններում ընդհանրությունները | Սովորել §2, էջ 5-8 |
| 3 /1/ | Բարոյականության վերաբերյալ պատկերացումները մինչքրիստոնեական աշխարհում: | | Սովորել §2, էջ 8-13 |
| 4 /1/ | Քրիստոնեական բարոյագիտություն: | Ա մակարդակ<br>Իմանա՝ քրիստոնեական բարոյագիտության կապը նախընթաց դարաշրջանի ձեռքբերումների հետ<br>Կարողանա՝ քրիստոնեական բարոյագիտությունը ներկայացնել՝ | Սովորել §3, էջ 17-20 |

| | | | |
|---|---|---|---|
| | | որպես բարոյագիտության պատկերացումների մեջ արմատական փոփոխությունների սկիզբ<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ քրիստոնեական բարոյականությունը հավատքի անկրկնելի բաղադրիչն է<br>Կարողանա՝ բացատրել քրիստոնեական սեր հասկացությունը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ Քրիստոնեությունը նախորդ շրջանի բարոյագիտությունը, բարոյագիտության քրիստոնեական ուսմունքը:<br>Կարողանա՝ ցույց տալ Քրիստոսի «Աստված սեր է» և «Սիրեցե՛ք միմյանց» պատվիրանների դերը | |
| ԹԵՄԱ II. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | |
| 5 /**1**/ | Քրիստոնեական իդեալ: Հավատ, հույս, սեր: | Ա մակարդակ<br>Իմանա՝ ինչ է քրստոնեական իդեալը՝ իր երեք հիմնական դրսևորումներով<br>Կարողանա՝ պարզաբանել և բացատրել քրիստոնեական իդեալ, հավատ, հույս, սեր հասկացությունները<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ հավատի, հույսի, սիրո կարևորությունը քրիստոնյայի կյանքում | Սովորել<br>§4, էջ 23-28 |
| 6 /1/ | Քրիստոնեական իդեալ: Հավատ, հույս, սեր: | Կարողանա՝ հիմնավորել պարտքի գիտակցության անհրաժեշտությունը հավատը և հույսը բարոյական արժեքներ դարձնելու գործում<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ հավատի և ճանաչողության տարբերությունները, հավատի և բարոյականության կապը, հույսի աշխարհիկ և կրոնական իմաստների տարբերությունները<br>Կարողանա՝ պարզաբանել հավատի բացառիկ դերը, հույսի աղբյուրը, հիմքը և | Սովորել<br>§4, էջ 28-33 |

| | | | |
|---|---|---|---|
| | | կապը հավատի հետ, սիրո դերը քրիստոնյայի կյանքում | |
| 7 /1/ | Թեմատիկ աշխատանք 1 | | |
| **8 /1/** | Մարդ – անհատի դերը և առաքելությունը: | Ա մակարդակ<br>Իմանա՝ ով է մարդը, որն է նրա առաքելությունը<br>Կարողանա՝ ցույց տալ, որ մարդը տիեզերքի միակ՝ բանականությամբ օժտված արարածն է<br>Բ մակարդակ | Սովորել<br>§5, էջ 35-38 |
| 9 /1/ | Մարդ – անհատի դերը և առաքելությունը: | Իմանա՝ կյանքի իմաստը, երկու տեսակետները<br>Կարողանա՝ ներկայացնել մարդու կյանքի իմաստը բացահայտող քրիստոնեական մեկնաբանությունը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ մարդու առաքելությունը ըստ քրիստոնեական մեկնության<br>Կարողանա՝ բացատրել կյանքի իմաստը և մարդը «արարչանման և արարչապատկեր է» արտահայտությունների իմաստը | Սովորել<br>§5, էջ 38-40 |
| **11 /1/** | Ազատ կամք և բանականություն: | Ա մակարդակ<br>Իմանա՝ «Ազատ կամք» հասկացության բովանդակությունը<br>Կարողանա՝ բացատրել ազատ կամքի կարևորությունը յուրաքանչյուր անհատի կյանքում<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ «Դուք ազատության կոչված եք», երկու տեսակետ՝ դետերմինիզմ և ինդետերմինիզմ, | Սովորել<br>§6, էջ 42-45 |
| **12 /1/** | Ազատ կամք և բանականություն: | | Սովորել<br>§6, էջ 45-48 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կարողանա՝ ցույց տալ դետերմինիզմ և ինդետերմինիզմ ուսմունքների կեղծ լինելը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ կապը ազատ կամքի, բանականության և կատարած արարքի համար պատասխանատվության միջև<br>Կարողանա՝ ցույց տալ, որ քրիստոնեական վարդապետությունը լուսավորում է մարդու բանականությունը, Ադամի օրինակը: | |
| 13 /1/ | Գործնական աշխատանք 1 | | |
| 14 /1/ | Քրիստոնեական բարոյագիտության սահմանումը: | Ա մակարդակ<br>Իմանա՝ քրիստոնեական բարոյագիտությունը կյանքի իմաստը պարզաբանող գիտելիք է և երկընտրանքի առաջ կանգնած մարդու համար մեղքի խուսափելու բարոյական խարիսխ<br>Կարողանա՝ տարբերակել առաքինությունն ու մեղքը որպես բարու և չարի, ճիշտ և սխալ ճանապարհի ընտրության տարբերակներ<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ ինչ է բարոյական գիտակցությունը<br>Կարողանա՝ ընդգծել բարոյական գիտակցության կարևորությունը մարդու համար<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ բարոյական բնական օրենք ու բարոյական գիտակցություն կողմնորոշիչները<br>Կարողանա՝ բացատրել առաքինություն և մեղք, քրիստոնեական բարոյագիտություն, բարոյական ազատություն, ամոթ, խիղճ, ինչպես հասնել բարոյական կատարելության: | Սովորել §7, էջ 50-58 |
| 15 /1/ | Ամփոփիչ կրկնություն | | |

<table>
<tr><td>16 /1/</td><td>Խոնարհություն և հպարտություն:</td><td rowspan="5">Ա մակարդակ<br>Իմանա՝ յոթ առաքինություններն ու յոթ մոլությունները<br>Կարողանա՝ տարբերել առաքինություններից ու մոլորություններից մեծագույնները<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ խոնարհության և հպարտության, գթասրտության ու ագահության, ժուժկալության և որկրամոլության, ողջախոհության և բղջախոհության դրսևորումները<br>Կարողանա՝ կիրառել առօրեական կյանքում<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ առաքինությունների և մոլությունների ներքին տրամաբանական և հոգեբանական կապը<br>Կարողանա՝ կիրառել առօրյայում տեղի ունեցող տարբեր իրավիճակներում</td><td>Սովորել §8, էջ 61-67</td></tr>
<tr><td>17 /1/</td><td>Գթասրտություն (ողորմածություն) և ագահություն:</td><td>Սովորել §9, էջ 69-73</td></tr>
<tr><td>18 /1/</td><td>Գթասրտություն (ողորմածություն) և ագահություն:</td><td>Սովորել §9, էջ 73-74</td></tr>
<tr><td>19 /1/</td><td>Ժուժկալություն և որկրամոլություն: Ժուժկալություն, որկրամոլություն:</td><td>Սովորել §10, էջ 77-80</td></tr>
<tr><td>20 /1/</td><td>Ողջախոհություն և բղջախոհություն:</td><td>Սովորել §11, էջ 83-87</td></tr>
<tr><td>21.</td><td colspan="3">Գործնական աշխատանք 2</td></tr>
<tr><td>22 /1/</td><td colspan="3">«Առաքինություններն ու մոլորությունները հասարակագիտության տեսակետից» թեմայով ինտեգրված դաս հասարակագիտություն առարկայի հետ</td></tr>
<tr><td>23 /1/</td><td>Ոսկե կանոն:</td><td rowspan="2">Ա մակարդակ<br>Իմանա՝ «Ոսկե կանոնի» իմաստը<br>Կարողանա՝ ներկայացնել մարդկանց միջև փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ բարեկիրթ և օրինական հարաբերությունների թերությունները<br>Կարողանա՝ նշել «Ոսկե կանոնի», օրինական և բարեկիրթ մարդու տարբերությունը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ «Անբարոյական կնոջ» և այլ նմանատիպ առակներ<br>Կարողանա՝ Քրիստոսի օրինակով ցույց տալ «Ոսկե կանոնով» ապրելու կարևորությունը</td><td>Սովորել §12, էջ 89-91</td></tr>
<tr><td>24 /1/</td><td>Ոսկե կանոն:</td><td>Սովորել §12, էջ 91-94</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| 25. /1/ | Համբերություն: | Ա մակարդակ<br>Իմանա՝ համբերության դերը մարդու կյանքում<br>Կարողանա՝ կապել համբերությունն ու կյանքի իմաստը<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ նիհիլիստական, հեդոնիստական և այլ տեսությունների կյանքի իմաստի, երջանկության և այլ բարոյագիտական հիմնարար խնդիրների շուրջ եղած հայացքները<br>Կարողանա՝ հիմնավորել դրանց սխալական լինելը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ քրիստոնեական բարոյականության տեսակետը<br>Կարողանա՝ քրիստոնեական սերը դիտարկել որպես այդ տեսություններում առկա հասկացությունների հաղթահարման ճանապարհ, իսկ համբերությունն ու հույսը՝ դրա շնորհիվ ծնունդ առած քրիստոնեական առաքինություն | Սովորել §13, էջ 96-99 |
| 26 /1/ | Համբերություն: | | Սովորել §13, էջ 99-101 |
| 27 /1/ | Հավատարմություն: | Ա մակարդակ<br>Իմանա՝ ինչ է հավատարմությունը<br>Կարողանա՝ բացատրել հավատարմության հասկացության իմաստը<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ կոսմոպոլիտիզմի և հայրենասիրության կամ ազգասիրության տարբերությունը<br>Կարողանա՝ բացահայտել կապը հայրենասիրության և ազգասիրության հետ<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ հայրենիքի և հայրենասիրության կարևորությունը<br>Կարողանա՝ բացատրել «Ի՞նչ է նշանակում ծառայել հայրենիքին» | Սովորել §14, էջ 103-107 |

| | | | |
|---|---|---|---|
| 28. | Մարդ անհատը և եկեղեցին: | Ա մակարդակ<br>Իմանա՝ մարդ անհատի եզակի դերը տիեզերքում<br>Կարողանա՝ պարզաբանել աստվածանման և աստվածապատկերով մարդու առավելությունները տիեզերքում<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ մեղքի բովանդակությունը, մեղքը՝ որպես մարդն իր առաքելությունից և կոչումից զրկող գործողություն<br>Կարողանա՝ պարզաբանել եկեղեցու դերը մեղքից ազատվելու գործում<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ եկեղեցու դերը ազգի պահպանման գործում<br>Կարողանա՝ ներկայացնել, որ մեղքից ազատվելու միակ ճանապարհը սեփական ջանքերն ու Աստվածային շնորհն են | Սովորել §15, էջ 109-111 |
| 29 /1/ | Մարդ անհատը և եկեղեցին: | | Սովորել §15, էջ 111-114 |
| 30 **/1/** | Թեմատիկ աշխատանք 2 | | |
| ԹԵՄԱ III. ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԵՍԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ | | | |
| **31 /1/** | Հայոց եկեղեցու ժամերգությունները և Ս. Պատարագը: | Ա մակարդակ<br>Իմանա՝ հայոց եկեղեցու ծեսերը<br>Կարողանա՝ ներկայացնել ծեսերն ու դրանց խորհուրդը<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ ինչ է աղոթքը, ժամերգությունն ու պատարագը<br>Կարողանա՝ ցույց տալ դրանց կարևորությունը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ աղոթքը՝ որպես Աստծո հետ հարաբերվելու առաջնային միջոց, ժամերգության ընդհանրական աղոթքի ծես լինելու և պատարագի առանցքային նշանակություն ունենալու մասին<br>Կարողանա՝ ներկայացնել աղոթքի տեսակներն ու պատարագի բաղադրիչները | Սովորել §16, էջ 117-122 |

<table>
<tr><td>32 /1/</td><td>Հոգևոր բարեպաշտական սովորույթներ:</td><td rowspan="2">Ա մակարդակ<br>Իմանա՝ հոգևոր բարեպաշտական սովորությունները<br>Կարողանա՝ տալ պատկերացում հոգևոր բարեպաշտական սովորույթների՝ որպես ընդհանրական եկեղեցուն և հայոց եկեղեցուն բնորոշ արարողությունների վերաբերյալ<br>Բ մակարդակ<br>Իմանա՝ առավել տարածում գտած մի շարք հոգևոր բարեպաշտական արարողությունների մասին<br>Կարողանա՝ բացատրել խաչակնքման, մոմավառության, խնկարկության, երկրպագության, տնօրհնեքի, անդաստանի, գերեզմանօրհնեքի, հոգեհանգստի իմաստը<br>Գ մակարդակ<br>Իմանա՝ հոգևոր բարեպաշտական արարողությունների կատարման կարգը<br>Կարողանա՝ բացատրել խաչակնքման, մոմավառության, խնկարկության, երկրպագության, տնօրհնեքի, անդաստանի, գերեզմանօրհնեքի, հոգեհանգստի և մատաղի իմաստն ու խորհրդաբանությունը</td><td>Սովորել §17, էջ 124-127</td></tr>
<tr><td>33 /1/</td><td>Հոգևոր բարեպաշտական սովորույթներ:</td><td>Սովորել §17, էջ 127-129</td></tr>
<tr><td>34 /1/</td><td colspan="3">Ամփոփիչ կրկնություն</td></tr>
</table>